Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԿԵՆՏԿՈՄԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԸ, ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԸ, ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԸ ԵՎ ՄԻ ՔԻՉ ԷԼ... ԵՍ

... Իսկ դահլիճը լռել էր ու պապանձվել, և չնայած նրան, որ լեփ-լեցուն էր Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրեթե բոլոր աշխատակիցներով՝ անուն ու ճանաչում ունեցող գրականագետներով և ինձ նման երիտասարդ գիտաշխատողներով, սպանիչ տպավորությունն այնպիսին էր, որ կարծես ներսում ոչ ոք չկար: Նայում եմ պատերի տակ ու հանդիպակաց աթոռների վրա նստածներին և քիչ է մնում չճանաչեմ նրանց՝ իմ ավագ ընկերներին, իմ տարեկիցներին: Նյարդայնորեն աչքերն է թարթում ու անհանգիստ աջ ու ձախ նայում Խորեն Սարգսյանը: Իր տեղը աթոռի վրա չի կարողանում գտնել ու չի խաղաղվում Գևորգ Աբովը: ՈՒրախ ու սրամիտ Խաժակ Գյուլնազարյանը նստած է տարօրինակ կերպով խոժոռ, մռայլադեմ ու սարսափազդու: Նվաղելուն մոտ կերպարանքով նստած էր Մանիկ Մկրտչյանը, որի ողբաձայն արտաբերված «Ա՜խ, աստված»-ներն էին միայն լսելի համակ լռության մեջ: Նույնիսկ Ալմաստ Զաքարյանը, որին դեմքի թուխ մաշկի համար մենք՝ երիտասարդներս, մկրտել էինք «թուխ Ալմաստ» մականունով, կծկվել էր պատի տակ ճեպ-ճերմակած այնպես, որ սպիտակ պատի վրա հազիվ էր զանազանվում:

Ինստիտուտի տնօրեն Գուրգեն Հովնանը, բազմած իր գրասեղանի առջև՝ բոլորիս դեմառդեմ, շանթահարող աչքերով նայում էր աջ ու ձախ, և մանավանդ այն կողմը, որտեղից թեկուզ աննշան փսփսոց էր լսվում: Իսկ երբ Հրայր Մուրադյանը առավել քան զգուշությամբ փորձեց դուրս սահել դահլիճից, Գուրգեն Հովնանը փոթկաց. «Ո՞Իր, Հրայր: Սպասի՛ր, տեսնենք գլխներիս ի՞նչ է գալիս»:

Իսկ թե ինչ էր գալու գլխներիս, ցավոք սրտի առավել քան լավ գիտեինք: Հրատարակվել էր «Սովետական գրականություն» ամսագրի այդ տարվա՝ 1961 թ. հերթական չորրորդ համարը, որտեղ ճակատագրի անբացատրելի զուգադիպությամբ տպագրվել էին Պարույր Սևակի թվով հինգ բանաստեղծությունները («Հայրենիքիս», «Արվեստ», «Միայնակ ծառը», «Ցա՜վն է հաճախ առաջ մղում» և «Հիանում-հրճվում եմ»),

որոնք որակվել էին որպես «գրական տհասության, ազգային սնապարծության, նացիոնալիզմի և նույնիսկ իդեոլոգիական դիվերսիայի» արտահայտություններ։ Հրատարակվել էր երիտասարդ ու տակավին անհայտ մի արձակագրի՝ Հրանտ Մաթևոսյանի գրական առաջնեկը՝ «Ահնիձոր» պատմվածքը, որի նկատմամբ ժամանակի մարքսիստական քննադատությունը է՛լ ավելի անողոք եղավ, խտրություն չդնելով ո՛չ կծու պիտակավորումների, ո՛չ էլ հեղինակի նկատմամբ ադմինիստրատիվ-պատժողական միջոցներ կիրառելու միջև։

«Սովետական գրականություն» ամսագրի այդ համարը որակվեց որպես «գաղափարական սայթաքում», այն արգելվեց վաճառել կամ բաժանել ընթերցողներին, իսկ քիչ ժամանակ անց, աշխատանքից հեռացվեց նաև խմբագիրը՝ Վազգեն Մնացականյանը։

Եվ «գաղափարական այս սայթաքումը» շուտով և հեշտությամբ ընդհանրացվեց ամբողջ ամսագրի վրա։ Այդ մտայնությունը հիմնավորող կռվանը նույն պարբերականի առաջին համարում հրատարակված իմ գրականագիտական խստաշունչ հոդվածն էր «Երբ հաշվի չի առնվում քննադատությունը» խորագրով։ Գրախոսել էի մատենագետ Հովհաննես Պետրոսյանի «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ» աշխատությունը, նշել էի բազմաթիվ վրիպումներ, անճշտություններ և բերել էի հայ գրողների, հրապարակախոսների, գրական-մշակութային գործիչների ավելի քան քսան անունից բացկացած ցուցակ, «առանց որոնց նույնիսկ անհնար կլիներ պատկերացնել մեր հոգևոր կուլտուրան ու նրա զարգացման պատմությունը», որոնք, սակայն, «հեղինակի անտեղյակության պատճառով դուրս էին մնացել աշխատությունից»։ Պարզվել էր, սակայն, որ իմ ներկայացրած ցուցակում մեկից ավելի էին եղել դաշնակցական կուսակցության գործիչները, մարդիկ, որոնց անունները հիշատակելն իսկ մեղքերից ծանրագույնն էր համարվում։

Համապատասխան եզրակացություններն այստեղ ավելորդ են։

Իսկ քանի որ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հանդիսանում էր մեր հանրապետության գրական-քննադատական մտքի կենտրոնը, և

ինչ-որ տեղ նաև այդ միտքը ձևավորողն ու մասնագիտական ուղղություն տվողը, ապա Կոմկուսի կենտկոմը նպատակահարմար էր գտել սկսել մեզնից, ինստիտուտ ուղարկելով գիտության ու կուլտուրայի բաժնի վարիչին՝ Ռոբերտ Խաչատրյանին, «ուղեղների լվացում» կատարելու համար։ Այս էր համառոտակի մեր հավաքի պատճառն ու բնույթը։ Այդ օրը ժամը 3-ին մեզ մոտ էր ժամանելու հիշատակված բաժնի վարիչը։

Կենտկոմի բաժնի վարիչ...

Չգիտեմ, կկարողանա՞մ բացահայտել այն հավաքական կերպարի էությունը, որպիսին ընկալվում էր «Կոմկուսի կենտկոմի աշխատող», կամ առավել ևս՝ «Կենտկոմի բաժնի վարիչ» հասկացողության ներքո։ Ասեմ միայն, որ դրանք տարօրինակ կերպով ինքնավստահ, հավակնոտ պահվածքով, և անպայման կարգադրողի, հրամայողի վառ արտահայտված կեցվածքով մարդիկ էին։ Կենտկոմի աշխատակիցը, առավել ևս բաժնի վարիչը, չէր խոսում, այլ միայն ճշմարտություններ էր բարբառում, ընդ որում բացարձակ, անբեկանելի ու անժխտելի ճշմարտություններ, և դիմացինին վերապահվում էր միայն վախվորած կերպով լսողի դերը։ Նա՝ կենտկոմականը, քննարկման չէր դնում իր այս կամ այն դրույթը կամ տեսակետը, քանզի նա կարիք չուներ ոչ մեկի կարծիքը լսելու կամ առավել ևս հաշվի առնելու։ Նա ընդամենը տեղյակ էր պահում իրեն ունկնդրողներին և վերջիններս պարտավոր էին առանց որևէ առարկության այն ի կատար ածել։ Կուսակցության կենտկոմի աշխատողը, առավել ևս, բաժնի վարիչը, մարքսիզմ-լենինիզմի ամենափրկիչ գաղափարների հետևողական ու մարտական տարածողներն ու հասարակական կյանքում ներդնողներն էին, և այդ հաղթական գաղափարները տարածելու համար նրանք կանգ չէին առնում բացարձակապես ոչնչի առաջ, անգամ սեփական ազգի մտավոր ու բարոյական ամենաթանկ արժեքները առուծախի առարկա դարձնելու և նույնիսկ նրանց անողորմաբար ոչնչացնելու առաջ, որովհետև կարևորը այդ վեհ գաղափարն էր, և ոչ թե ազգը կամ ազգայինը, քանզի անժխտելիորեն ապացուցված է, որ ազգը պատմական կատեգորիա է, նա ապագայում գոյություն չի ունենալու, իսկ մարքսիզմի վեհ գաղափարները գոյատևելու են հավիտյան։ Իսկ այս բոլորին հասնելու համար հարկավոր էր անդուլ աշխատանք, ավելի ճիշտ՝ այդպիսի աշխատանքային իրավիճակ ստեղծելու պատրանք, և նրանք՝ «կենտկոմականները», օր

ու գիշեր զբաղված էին ամենազարհուրելի կերպով։ Նրանց համար այդպես էլ անգո երազանք մնաց, ասենք, կիրակի օրը տանը՝ ընտանեկան հարկի տակ անցկացնելը կամ ամռան ամիսներին արձակուրդ վերցնելն ու խաղաղ մի անկյունում հանգստանալը։ Չէ՞ որ հենց դրան էր սպասում «դասակարգային թշնամին»՝ իր սև գործն անելու, ազգին «գաղափարական դիվերսիայի» ենթարկելու, նրա մտավորականությանը «բուրժուական իդեոլոգիայի գարշահոտ ճահճուտը» ներքաշելու համար։ Ահա թե ինչու նրանք մշտապես պատրաստ վիճակում պետք է լինեին, ի սեր իրենց ազգի, ի սեր նրա գաղափարական անաղարտության։

Այս բացատրությունից հետո ընթերցողների համար պարզ կդառնա, թե ինչու պիտի Գրականության ինստիտուտի աշխատակիցները այդպիսի նյարդային պահվածքով սպասեին Կենտկոմի բաժնի վարիչին, և թե ինչու էին այդքան հուզված ու լարված ինստիտուտի գիտնականները։ Բոլորս էլ գիտեինք նրա գալստյան «դաստիարակչական» նպատակը, և չէինք էլ կասկածում, որ մեզ հետ տարվելիք «գաղափարական» աշխատանքից հետո մեկից ավելի աշխատակիցներ «Իրենց դիմումի համաձայն» կազատվեին աշխատանքից։

Եկավ տանջալից սպասման վերջնակետը՝ ժամը 3-ը, ապա՝ երեք անց տաս, տասնհինգ, քսան, քսանհինգ... Դահլիճում նստածների լարվածությունը հասավ գագաթնակետին...

- Ղեկավար ընկերն ինչ-որ ուշանում է, – քթիս տակ փնթփնթացի ես, – իսկ սեփական ժամադրությունը չհարգողը...

Սկվեցի իսկույն, որովհետև իմ կողմն ուղղվեց զայրույթի կաս-կարմիր կտրած դեմքերի համախումբ։ «Ամբարտավան սերունդ է աճում, է՛լի, ի՞նչ կարող ես անել», – չկարողացավ իրեն զսպել Զվարթ Ղուկասյանը։ «Ա՜յ տղա, նա ամբողջ Հայաստանի իդեոլոգիական ճակատն է ղեկավարում, իր ժամանակն ի՞նչ է, քեզ հե՞տ պիտի համաձայնեցնի», – անհապաղ ինձ «դաստիարակեց» Գևորգ Աբովը։ «Սուրի՛կ, սիրելիս, ով խոսի՝ խոսի, դո՛ւ գոնե պարտավոր ես լռել, – հոգածու նկատեց Ռուզան Նանումյանը, – դու քո վիճակն ինձնից ավելի լավ գիտես, չէ՞»։

Այո, ես իսկապես պետք է լռեի, որովհետև իմ վիճակն իրոք տարբեր էր մյուսներից և՝ առավել քան վատ առումով։ Վերոհիշյալ հոդվածս լույս աշխարհ գալուց քիչ անց, ինձ ու ամսագրի խմբագիր Վազգեն Մնացականյանին անհապաղ «հրավիրեցին» Կենտկոմ։ Տեղի ունեցավ տհաճ մի զրույց մեր ու Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Գևորգ Հայրյանի միջև։ Ես փորձում էի ապացուցել, որ եթե Հովհաննես Պետրոսյանի գիրքը կոչվում է «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ», ապա այնտեղ պետք է տեղ գտնեին այդ բնագավառի՝ հնարավորինս բոլոր ներկայացուցիչները, առանց կուսակցական պատկանելության։ Հակառակ դեպքում գիրքը պետք է կոչվեր «Հայ կոմունիստ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ» կամ նման մի բան։ Խոսակցությունը խստացավ և ի վերջո ավարտվեց նրա՝ անսքող սպառնալիքով ասված արտահայտություններով։

Այսպիսի վտանգավոր վիճակում էի ես հայտնվել ու այս միջադեպին տեղյակ էին շատերը, հարկավ նաև սպասվող բաղձալի հյուրը...

Վերջապես, ավելի քան քառասուն րոպե ուշացումով, նա եկավ։

Խոստովանում եմ, ինչ-որ առինքնող բան կար Կենտկոմի բաժնի վարիչ Ռոբերտ Խաչատրյանի կեցվածքի, նրա ազդեցիկ շարժուձևի ու պահվածքի մեջ։ Տիրական հայացքով նա զննեց դահլիճը, ապա պատրաստակամ ժպտալով, անհատապես բարևեց մի քանի ծանոթների, դիմելով նրանց հականե-հանվանե՝ «Ողջույն ձեզ ընկեր Հովնան», «Խորեն Սերգեյիչ, սիրելի՛ս, ինչպե՞ս եք», «Պրոֆեսոր Աբո՛վ, կարդացի ձեր վերջին հոդվածը. հիանալի էր», ինչն, ի դեպ, հիացմունքի շշուկներ կորզեց ներկաներից՝ Կենտկոմի ամենաազդեցիկ բաժնի վարիչն է, Հայաստանի գաղափարական ճակատի առաջնորդն է, բայց ոչ միայն պարզ ու հստակ խոսում է մեզ հետ, այլև շատերին էլ անվանապես գիտի։

Գուրգեն Հովնանը, իհարկե, աճապարանքով իր սեղանի մոտ հրավիրեց բարձրապատիվ հյուրին, հուզմունքից ընդհատվող ձայնով մի քանի նախադասությամբ ներկայացրեց նրան և ամբիոնի մոտ խնդրեց «մեր ավագ ընկերոջն ու բարեկամին», չմոռանալով հավելել, որ ներկաները «որոշ նշումներ անեն» կայանալիք զեկուցումից։

Զեկուցողը միանգամից անցավ հարձակման և սկսեց Պարույր Սևակից։ Արձանագրեց, որ «Սևակ-ֆենոմենը» որպես բանաստեղծ, արդեն խոսակցություն է բացել իր մասին, քանզի նա «որոշակի արտահայտված բանաստեղծական անհատականություն է»։ Բայց այդ տաղանդը, տարաբախտաբար, դեռ չի գտել իր գաղափարական մեկնակետը՝ մարքսիզմ-լեզինիզմի գեղագիտական «կոնցեպտուումը»։ Ավելին, ոչ միայն չի կարողանում ստեղծագործել այդ ամենահաղթ ուսմունքի գեղագիտական դրույթներն ի նկատի ունենալով, այլև երբեմն արշավում է տրամագծորեն հակառակ արահետով։

- Իմ ասածի հիանալի ապացույցը վերջերս հրատարակված նրա «Անլռելի զանգակատուն» պոեմն է, – հռետորի հայացքը տիրականորեն թվածում էր պապանձված դահլիճի վրայով, - և պետք է ասեմ, որ պոեմն ամբողջությամբ, որպես գրական-գեղարվեստական ստեղծագործություն, պահանջվող քննությանը լավ-վատ դիմանում է։ Իսկ երբ այն քննում ենք գաղափարական առումո՞վ, քննում ենք մարքսիստական գեղագիտության տեսակյունի՞ց, – հռետորը անմեկնելի խորհրդավորությամբ ընդմիջեց խոսքը, – որքանո՞վ է արդարացվում այն հանգամանքը, որ այսօր, սոցիալիստական իրականության պայմաններում, կոմունիստական անդասակարգ հասարակության կառուցման ճանապարհին, գեղարվեստական ստեղծագործության հերոս դարձվի, – հետագա բառերը հնչեցին կրակոցի նման, – քահանա՛ն։ Այո՛, այո՛ քահանան, Կոմիտաս վարդապետը, քիչ կոպիտ ասած՝ տերտերը։

Եվ Կենտկոմի բաժնի վարիչը ծավալվեց ու ծավալվեց այս բնագավառում։

Ասվեց, որ Կոմիտասը «նշվելու արժանի մեկ-երկու գործ», իհարկե, արել է մեր ժողովրդի մշակութային կյանքում, թեև, նրա ամբողջ գործունեությունն ի կատար ածելու համար պետք էր ընդամենը յոթ նոտա գիտենալ։ Բայց այսօր, մեր գաղափարախոսության դիրքերից՝ նրա արածը ընդամենը պատմական արժեք ունի։ Այս է, ահա, որ չի հասկացել Պարույր Սևակը։ «Սոցիալիստական Հայաստանն ունի դարակազմիկ հերոսներ՝ Սպանդարյան, Շահումյան, Ալլահվերդյան, Ղարիբջանյան, Հայրենական պատերազմից՝ Հունան Ավետիսյան, Նելսոն Ստեփանյան, մարշալ

Հովհաննես Բաղրամյան... Եվ այս բոլորին, «միանգամայն կասկածելի հաստատակամությամբ» չի՛ նկատել Պարույր Սևակը և իր պոեմի համար հերոս է ընտրել կրոնավորին»:

Զեկուցողը հանգամանորեն վերլուծեց կրոնի՝ իբրև հետադիմական գաղափարախոսության վնասակար էությունը, մի քանի անգամ վկայակոչեց ու մեկնաբանեց Մարքսի «Կրոնը ժողովրդի օփիումն է» ասույթը...

- Եվ «Սովետական գրականություն» ամսագրում տպագրված նրա հինգ բանաստեղծությունները, – հռետորը ցուցադրաբար բարձրացրեց հիշատակված համարը, – նորից գալիս է ապացուցելու, որ Պարույր Սևակը ոչ միայն չի սովորել իր կապակցությամբ ծավալված մարքսիստական քննադատությունից, ոչ միայն այդ քննադատությունը որպես գործողությունների ուղեցույց չի ընդունել իր համար, այլև համառորեն շարունակել է պնդել իր սխալների վրա, գնալ խորհրդային գրականությանը խորթ, հակասոցիալիստական ճանապարհով»:

Հռետորն անշտապ բացեց ամսագիրը, մի քանի վայրկյան տիրականորեն զննեց դահլիճը. «Խնդրե՛մ, բանաստեղծություններից մեկն, օրինակ, ունի «Ցա՛վն է հաճախ առաջ մղում» խոսուն վերնագիրը և այնտեղ կայուն հետևողականությամբ զարգացվում է այդ իսկ միտքը, – Կենտկոմի բաժնի վարիչը հեգնանքով ժպտաց, – հասարակության համար նոր շարժիչ ո՛ւժ է հայտնաբերել մեր նորաթուխ տեսաբանը: Բոլորը գիտեն, որ հասարակության շարժիչ ուժերը դասակարգային պայքարն ու այդ պայքարի ձևերն են: Մարքսիզմի այս այբուբենը գիտի ամեն մարդ, բայց պարզվում է չգիտի Պարույր Սևակը, ավելին, չի՛ ուզում իմանալ և դեռ տեսություն էլ է զարգացնում, որ մեր հասարակական կյանքի առաջմղիչ ուժը... ցավն է: Ճիշտն ասած, իմ կուսակցական տրամաբանությունը հրաժարվում է այս միտքը հասկանալ»:

... Նա ցուցադրաբար սպասեց, մինչև դահլիճը լռի: Ներկաներն էլ հասկացան, որ ընդմիջումը նոր «հարձակում» սկսելու միջոց է միայն: Եվ «հարձակումը» չուշացավ:

- Թանկագին կոլեգաներ, հիմա պետք է ներկայացնեմ Սևակի՝ ամսագրում տպագրված հաջորդ բանաստեղծությունը «Արվեստ» վերնագրով։ Այսինքն՝ այն հենց դուք պետք է վերլուծեք ինձ համար։ Այսպիսով ես ցանկանում եմ ստուգել ինքս ինձ, մանավանդ որ սա այն դահլիճն է, որտեղ ես կարող եմ միայն ուսանող լինել։ Անկողմնակալ կերպով կարդում եմ, - և խոսողը ցուցադրաբար սկսեց.

Քամին է երգում ինչ-որ եղանակ,

Որ Բեթհովենին պատիվ կբերեր։

Մութ հորիզոնին աղոտ այգալույս,

Մի ռեմբրանդյան նորահայտ նկար։

Մի տարակուսալից պահվածքով ու դեմքի հեգնական արտահայտությամբ նայեց ներկաներին ու շարունակեց.

Շեքսպիրին է կյանքը ձեռ առնում՝

Իր ողբերգական դրրամաներով...

- Բայց այս բոլորը դեռ ոչինչ, – արդեն անսքող հեգնանքով շարունակեց խոսողը, – դեռ ինչ-որ ձևով կարելի է հաշտվել այս արտառոց պատկերների ու տարօրինակ համեմատությունների հետ։ Գրական խոտաններ միշտ էլ լինում են։ Գաղափարապես անընդունելին և մեր սոցիալիստական գրականագիտության տեսակետից ոչ մի քննադատության չդիմացողը բանաստեղծության ավարտն է՝

Իսկ մե՛նք, ես ու դու... արվեստ ենք խաղում,

Եվ... մի այնպիսի՛ համոզվածությամբ,

Որ Սերվանտեսի հերոսն էլ չուներ...

Հռետորը դաժան խորհրդավորությամբ լռեց։ Լուռ էր և դահլիճը...

- Մենք՝ աշխարհի ամենաառաջավոր արվեստ ստեղծողներս, այն ոչ թե ներկայացնում ենք որպես մեր հոգեկան կերտվածքը դրսևորող միանգամայն նոր և ավելի առաջավոր ձև, այլ... խաղում ենք։ Այստեղ, ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են, բայց բխում է եզրակացությունը։ Թույլ է տրված քաղաքական բնույթի սխալ։ Պարույր Սևակը սայթաքել է բուրժուական անկումային արվեստը փառաբանողների ճահիճը, որոնց հետ պայքարի մեր ձևը ոչ մի զիջում կամ ներողամտություն չի կարող հանդուրժել։ Ահա այսպիսին է իմ՝ գաղափարական ֆրոնտի ղեկավարիս, Կոմունիստական կուսակցության անդամիս կարծիքն ու համոզմունքը, – նա հայացքը հաղթականորեն սահեցրեց նստածների վրայով, – դուք ունե՞ք ուրիշ կարծիքներ։ Կամ գուցե ես ճիշտ չե՞մ կողմնորոշվում։ Եթե կան՝ խնդրե՛մ, ես սիրով կլսեմ ձեզ։

ՈՒրիշ կարծիքներ, իհարկե, չկային։ Եվ ինչպե՞ս կարող էին լինել...

Անցնելով Հրանտ Մաթևոսյանին, Խաչատրյանը դիմեց մի հարցով.

- Թանկագին բարեկամներ, այս դահլիճում նստած են ժամանակակից հայ գրաքննադատության գրեթե բոլոր ականավոր դեմքերը, մասնագետներ, ում անունն ու գործը վաղուց դուրս են եկել մեր հանրապետության սահմաններից։ Ձեզ հայտնի՞ է արդյոք, թե ով է այս երիտասարդը։ Նայել եմ շատ պարբերականներ, թերթել եմ ոչ քիչ թվով ամսագրեր, թերթեր ու գրական ալմանախներ, սակայն «Հրանտ Մաթևոսյան» ստորագրությամբ ոչինչ չեմ կարողացել գտնել։ Սա, ուրեմն, երիտասարդի գրական երախայրիքն է, և հենց սկզբից իսկ արձանագրենք, որ այսպիսի երախայրիքը տխուր խոհերի տեղիք է տալիս։ Պատմվածքի «Ահնիձոր» վերնագիրն ունի տարակույս հարուցող մի ենթավերնագիր էլ. «Հե՛տ դեպի անցած կյանքը»։ Թույլ տվեք հարցնել, դեպի ո՞ր կյանքը, – հռետորը բազմանշանակալից կերպով ժպտաց, – Մաթևոսյանը չգիտես ինչու խիստ դժգոհ է մեր նոր, սոցիալիստական գյուղից, աշխարհին զարմացնող նրա նվաճումներից, իր իսկ լեզվով ասած՝ «կոլխոզից ու կոլխոզայինից», և այսօր խորհրդային կոլտնտեսական կարգերի գոյության քառասուներորդ տարում, մեզ առաջարկում է հետ գնալ դեպի անցյալը։ Այստեղ կարիք կա՞ համապատասխան վերլուծականների։

- Եվ որ կարևոր է, Հրանտ Մաթևոսյանը հիանալի հասկանում է, թե որն է իր երազած հին գյուղը: Նա նույնիսկ տվել է այդ գյուղի լիրիկական մոդելը. յուրաքանչյուր գյուղացի ունենա իր սեփական հողը, ոչխարների հոտն ու կովերի նախիրը, ունենա ձիերի իր երամակները և ինքն էլ ընտանիքի անդամներով պահի-պահպանի նրանց, առանց համապատասխան ղեկավարության և վերևից եկող ցուցումների: Բնականաբար, ինքն էլ պետք է տնօրինի ստացված ամբողջ եկամուտը, այն վաճառի շուկաներում և այլևայլ առևտրական կետերում, ստանա վիթխարի շահույթներ, իսկ պետությունն էլ, – բացելով ամսագիրը նա սկսեց կարդալ, - «կստանա մի քիչ հարկ կամ բնամթերք, ինչպես որ ինքը ցանկանա»:

Հոետորը հեգնանքով ծիծաղեց, – Սիրելի բարեկամներ, բայց չէ՞ որ սա ամենահիսկական կուլակային տնտեսություն է: Հենց այն տնտեսությունը, որը հիմնավորապես խորտակեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և որը վաղուց արդեն անցած էտապ է մեզ համար: Ահա թե ո՛ւր է կամենում առաջնորդել մեզ Հրանտ Մաթևոսյանը՝ առաջնորդել դեպի հինը, դեպի պատմականորեն իր դարն ապրածը և, ուրեմն, մերժվածը:

Զեկուցողն այստեղ էլ չզլացավ հանգամանորեն վերլուծություններ կատարելուց և հանգեց շեշտակի մի եզրակացության. Հրանտ Մաթևոսյանը նարոդնիկության և ազգային կուլակության գաղափարախոսն է հայ ժամանակակից գրականության մեջ: Գրական մի ռեցիդիվ է նա, որի դեմ պետք է անխնա պայքար ծավալել:

... Հավաքվեցի տեղումս և է՛լ ավելի կենտրոնացա: Հիմա հերթը իմն է...

Զեկուցողը նշեց, որ «երիտասարդ քննադատի հոդվածը վկայում է նրա մասնագիտական անառարկելի պատրաստության մասին», բայց, տարաբախտաբար, նա վատ է տիրապետում մարքսիզմ-լենինիզմի հիմնարար դրույթներին և կատարելապես անտեղյակ է այդ ուսմունքի ամենակարևոր՝ դասակարգային պայքարի տեսությանը, այստեղից բխող բոլոր վտանգավոր հետևանքներով:

Կծկվեցի տեղումս...

- Միայն դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, – հռետորի ձայնը խստաշունչ էր, – որ երիտասարդը Հովհաննես Պետրոսյանին լրջորեն մեղադրում է նրանում, որ վերջինս իր գրքում չի անդրադարձել, օրինակ, Երվանդ Թոլայանին կամ Վահան Փափազյանին, կամ Մելքոն Կյուրճյանին։ Մարքսիզմին թեկուզ թեթևակի ծանոթ ամեն ոք գիտե, որ դրանք դաշնակցականներ են, և ավելին, այդ կուսակցության գաղափարական առաջնորդներ։ Ո՞վ չգիտե, որ Վահան Փափազյանը հանրահայտ «Կոմսն» է, որը շատ հոդվածներ ունի բոլշևիկյան գաղափարախոսության դեմ։ Ո՞վ չգիտե, որ Երվանդ Թոլայանը «Գավռոշն» է, որը բազմիցս ասում ու գրում էր, որ կոմունիստական վարչակարգը միայն վնասներ ու աղետներ բերեց հայ ժողովրդին։ Սրանց նկատմամբ մեր վերաբերմունքը միայն անհաշտ ու անողոք պայքարն է։ Եվ ուրեմն ինչո՞ւ պետք է դաշնակցական այդ թշնամիների կենսագրությունները, և դեռ ավելին, նրանց ստեղծագործությունների ցանկերն ու բովանդակությունները տեղ գտնեին խորհրդային գիտնականի աշխատության մեջ։ Գաղափարական սայթաքումն այստեղ առավել քան ակնհայտ է, և աններելի է, որ դա թույլ է տվել երիտասարդ գիտնականը, այն էլ՝ կոմունիստը... Ես չեմ թաքցնում, որ ինձ՝ Կոմունիստական կուսակցության լիդերիս համար, շատ ավելի մոտ է ու հասկանալի անկուսակցական Հովհաննես Պետրոսյանի գաղափարական դիրքորոշումը, քան երիտասարդ կոմունիստ Սուրեն Շտիկյանինը։

- Մեզ հայտնի է դարձել, – հռետորի արտաբերած բառերն արդեն հնչում էին կրակոցների նման, – որ բոլորովին վերջերս, Կենտկոմում համանման բնույթի մի խոսակցություն արդեն կայացել է ընկեր Գևորգ Հայրյանի և մեր երիտասարդ քննադատի միջև։ Եվ ի՞նչ։ Երիտասարդը ոչ միայն չի ընդունել արված բարեկամական դիտողությունները, այլև պնդել է իր սխալների վրա, նույնիսկ փորձել է հոդվածի արատավոր տրամաբանությունից բխող ինչ-որ տեսակետներ զարգացնել, - բաժնի վարիչը քննող հայացքը տիրականորեն սահեցրեց լռած դահլիճի վրայով, – Ես կկամենայի հիշեցնել մեր անհեռատես քննադատին, որ կուսակցական սկզբունքայնությունը բոլորովին այլ բան է, անիմաստ համառությունը՝ այլ։ Կոմունիստական կուսակցությունը, ի տարբերություն, առ այսօր եղած բոլոր

կուսակցությունների, ունի նաև մի այլ բնութագրական գործելաեղանակ՝ ունի պատժիչ ֆունկցիա, և մենք այն հետևողականորեն կիրառում ենք կուսակցական գծից թեկուզ աննշան չափով շեղվողների նկատմամբ...։

* * *

Այս բոլորը, սակայն, իրադարձությունների սկիզբն էր։ Շարունակությունը ծավալվեց «գաղափարական» ժողովից քիչ անց, երբ լույս տեսավ հանրապետության կոմունիստական կուսակցության օրգանի՝ «Սովետական Հայաստան» օրաթերթի 1961 թ. հուլիսի 13-ի համարը, որտեղ հրատարակվել էր ջախջախիչ մի հոդված՝ «Բարձրացնել գրական ամսագրի գաղափարական մակարդակը» վերնագրով։ Հոդվածն անստորագիր էր, և հեղինակի ով լինելն այդպես էլ չհաջողվեց պարզել։ Կարևորն այն էր, սակայն, որ այն գրված էր նույն ոգով ու տրամաբանությամբ, ինչպիսին էր ինստիտուտ ժամանած «կենտկոմական ընկերոջ» ելույթը։

Անանուն հոդվածագիրը ցավ էր հայտնում, որ չնայած այն հանգամանքին, որ «Սովետական գրականություն» ամսագիրը կոչված է հայ ժամանակակից գրականությունը զարգացնելուն և գրական կյանքը կազմակերպելուն, «նրա էջերում մերթ ընդ մերթ հյուրընկալվում են գաղափարական-գեղարվեստական տեսակետից թույլ գործեր, սխալներ պարունակող հոդվածներ, որոնք, բնականաբար, չեն կարող նպաստել սովետահայ գրականության առջև ծառացած խնդիրների հաջող լուծմանը»։

Նման խոցելի և գաղափարապես անարժեք գործերից առաջինը, հասկանալի է, հիշատակված էր Հրանտ Մաթևոսյանի «Ահնիձոր» պատմվածքը։ Քննադատականի անանուն հեղինակը, օգտագործելով մարքսիստական զինանոցին բնորոշ կծու պիտակավորումներ, տալիս է այդ գործի ամփոփիչ գնահատականը. «Ակնարկում ոչ միայն խեղաթյուրված է սովետական իրականությունը, այլև զրպարտված են մեր մարդիկ, որոնց աշխատանքն ու կենցաղը ներկայացված են ծուռ հայելու մեջ։ Ավելին, ամբողջ ակնարկը ներթափանցված է չարամտությամբ դեպի ռևոլյուցիոն այն մեծ վերափոխումները, որ կոմունիստական պարտիայի իմաստուն քաղաքականության

շնորհիվ տեղի են ունեցել գյուղում ու նրա մարդկանց հոգեբանության մեջ վերջին տասնամյակներում»։

Այսպիսին եղավ քսանվեցամյա «ոմն Հրանտ Մաթևոսյանի» մուտքը սովետահայ գրականության անդաստան։ Այսպիսի «բարձրագույն» գնահատականի արժանացավ սկսնակ արձակագրի գրական առաջին թոթովանքը և այն էլ կուսակցական-պետական ամենավերին մակարդակով։ Չեմ խոսում արդեն այն մասին, որ 60-ական թվականներին գրեթե չգիտեինք, և մինչև այսօր էլ ինչպես հարկն է չենք պատկերացնում ծայր առած մեծ ու փոքր հալածանքների ամբողջ շղթան, որը հետևողականորեն սանձազերծվեց նրա նկատմամբ։ Եվ այս բոլորից հետո, մի՞թե զարմանալի էր, որ Հրանտ Մաթևոսյանը երկար ժամանակ պետք է լռեր...

Օրաթերթի անանուն գրախոսը շարունակում էր ամսագրի թերությունների բացահայտումը նույն դիրքերից և նույն տրամաբանությամբ։ Խստագույնս քննադատված են Սուրեն Աղաբաբյանն ու Լևոն Հախվերդյանը, ովքեր «կորցնելով չափի զգացումը» ողջունել են նորահայտ Հրանտ Մաթևոսյանի մուտքը գրականության անդաստան։ Քննադատված է Ալմաստ Զաքարյանի «Ժողովրդային արվեստի ուսումնասիրության ուղիներով» հոդվածը, որը «լուրջ առարկություններ է հարուցում»։ Գրախոսը հանգամանորեն անդրադառնում է Հրանտ Թամրազյանի «Շիրվանզադեն և նրա նախորդները» հոդվածին, որտեղ զարգացրած տեսակետների հետ «չի կարելի համաձայնել» և այլն։

Քննադատականն ավարտվում էր հետևյալ վերջաբանով. «Ամսագրի մի շարք հոդվածներում բացակայում են պարտիականության սկզբունքը, մարտական ոգին, իսկ որոշ դեպքերում էլ նկատվում են սայթաքումներ սկզբունքայնության դիրքերից։ Դա արտահայտվել է նաև «Երբ հաշվի չի առնվում քննադատությունը» գրախոսության մեջ։ Խոսելով «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ» գրքի մասին, գրախոս Սուրեն Շտիկյանին զարմանք է պատճառում, որ այդ շարքում տեղ են գտել Բ. Կնունյանցը, Հ. Հակոբյանը, Գ. Հայկունին, Ե. Չարենցը, և ընդհակառակը, ցավ է պատճառում, որ այնտեղ բացակայում են «խոշոր և անփոխարինելի դեր կատարած»

այնպիսի աչքի ընկնող հրապարակախոսներ, խմբագիրներ, գրական և հասարակական կյանքի տեսաբաններ, ինչպիսիք են Կարապետ ՈՒթուջյանը, Վահան Փափազյանը, Բյուզանդ Քեչյանը և նման ուրիշ անուններ, որոնց շատերին արդեն մոռացության է մատնել ինքը՝ կյանքը»։

Համապատասխան եզրակացությունները թողնում եմ ընթերցողներին։

Եվ դեռ տարիներ պետք է անցնեին, որպեսզի գեթ ինչ-որ չափով ուղղվեր այս ամենը...

Գարուն, 1992, № 7, հուլիս, էջ 74